

## Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարերի պատասխանները

### XII դասարան

1.451 թվականի մայիսի 26-ին հայ ժողովուրդը նվաճեց իր պատմական հողում ապրելու և հայ ու քրիստոնյա մնալու անքակտելի իրավունքը: Ժողովուրդը Ավարայր գնաց «Վասն հաւատոյ, վասն հայրենեաց» անխախտ հավատով: Մեկ օր տևած այդ հերոսամարտում նահատակվեցին և սրբացվեցին 1035 զինվորյալներ: Այդ հերոսամարտը մանրամասնորեն մատենագրեց 5-րդ դարի պատմիչ Եղիշեն, որին մեծարեցին Ավարայրի երգիչ կամ պլպուլյն Ավարայրի շրջասույթով: Մատյանը կոչվում է «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմի»: Այս հերոսամարտի մասին տեղեկություններ է հաղորդել 5-րդ դարի պատմիչ Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմության» 2-րդ դրվագում: Հետագայում Ավարայրի թեմային անդրադարձել են Ղևոնդ Ալիշանը, ռափայել Պատկանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դերենիկ Դեմիրճյանը և այլք:

1467 տարի անց մայիսի 21-26-ը կրկնվեց նույն հերոսամարտը սարդարապատում, որն անվանվեց երկրորդ Ավարայր կամ 20-րդ դարի Ավարայր. 15 դար հետո Հայաստանը կանգնած էր նույն բախտորոշիչ խնդրի առաջ. Թշնամին Հայոց հավատի տաճարի մատույցներին էր մոտեցել. Ջորքը հուսալքված էր, ինչպես 5-րդ դարում. ոտքի ելավ ռամիկը՝ հող հայրենին, ոտքի ելան ամենքը, կրկնվեց Ղևոնդ երեցի սխրանքը Գարեգին Հովսեփյանի, Մանասեր Մանասերյանի և մյուս նվիրյալների խոսքով ու գործով: Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Գևորգ V-ի հրամանով ղողանջեցին Էջմիածնի և շրջակա գյուղերի բոլոր եկեղեցիների զանգերը անընդմեջ՝ մինչև գոյամարտի հաղթական ավարտը: Սարդարապատի հերոսամարտով դրվեց հայոց պետականության հիմքը: Սարդարապատի ճակատամարտին անդրադարձել են Բագրատ Ուլուբաբյանը «Սարդարապատ» վեպով, Յուրի Բեկ-Փիրումյանը «Դանիել Բեկ-Փիրումյանի կյանքը» ուսումնասիրությամբ, ֆրանսիացի հայազգի պատմաբան Սերժ Աֆանասյանը «Սարդարապատի հաղթանակը» ուսումնասիրությամբ, Վահագն Դավթյանը «Սարդարապատ» պոեմով, գերմանացի Ալեքս Շնաուերը «Առաջին աշխարհամարտի մասին», հրատարակվել է «1918 թվականի մայիսյան հերոսամարտը մասնակիցների հուշերում» հուշապատումը՝ թանգարանի աշխատակիցների նախաձեռնությամբ և այլն:

«Սարդարապատ» երգի բառերի հեղինակն է Պարույր Սևակը, երաժշտությունը գրել է Էդգար Հովհաննիսյանը՝ Սարդարապատի հուշահամալիրի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի առաջարկով:

Իսկ հերոսների մասին գրի՛ր իքդ, սիրելի՛ մասնակից:

2. «Ալպիական մանուշակ» նուրբ ու քնարական պատմվածքը նվիրված է Եղիշե Չարենցի կնոջ՝ Արփենիկ Չարենցի հիշատակին: Այս պատմվածքում շոշափվում են գեղեցիկի ըմբռնման և կոպիտ իրականության հակադրության հարցերը: Կյանքի բանաստեղծական ընկալումը (նկարիչ), բանաստեղծականի անզգայությամբ պատմական հնություններով տարված հնագետը, կյանքի հոգսերի մեջ կորած ու իր

գեղեցկությանն անտեղյակ լեռնուհին, մթնաձորյան գորշ առօրյայից հոգնած ու  
չարացած հնձվորը լրացնում են միմյանց՝ տալով բազմաշերտ կյանքի բնութագիրը:  
Ալպիական մանուշակը լեռնուհին է, որ ծեծվում է չգործած մեղքի համար, ինչպես  
անխղճորեն տրորվում է ալպիական մանուշակը. Ծաղկափոշու մեջ թաթախված  
գունավոր բզեզի օրորը և մահակի հարվածը արծաթափայլ սուրմաները գնգացնող կնոջ  
թիկունքին հիմնական հակադրություններն են: Գեղջկուհին նկարչին հիշեցնում է  
ծովափի կնոջը, որը «երբեք բոբիկ ոտքերով չի քայլելի, չի նստել մխացող աթարի  
առաջ», իսկ այս կինը նման է «ծխի քուլաները գուշակող քրմուհու»:

Եղիշե Չարենցը իր՝ Բակունցին ձոնած բանաստեղծության մեջ գրում է.

...Եվ բառերի համար քո մարմարյա, հնամենի, բուրյան, որպես մեր հին  
Քարաքանդակ անդուռ մատուռների անջնջելի գրերն հնադարյան....  
Եվ մյուռոնի նման սրբազնագույն քո երկերի մաքուր սկիհներում  
Պահված խորհուրդների համար մշտահմա, որպես խորհուրդը մեր  
Նահրական ոգու, քո «Միրհավի» համար և լուսեղեն՝  
Արփենիկի հուշով սրբագործված հավետ «Ալպիական ծաղկի»  
Այն բուրավետ, որ բուրել ու է հար աննյութեղեն...

3. Խաչիկ Դաշտենցը հայ նորագույն արձակի տաղանդավոր ներկայացուցիչներից է:  
Ծնվել է Արևմտյան Հայաստանի Բիթլիսի վիլայեթի Դաշտադեմ գյուղում (այստեղից էլ  
նրա գրական անունը. իսկական ազգանունը՝ Տոնոյան):

Գրել է բանաստեղծություններ, չափածո ողբերգություն, վեպեր, հուշեր, գրել է  
բանասիրական ուսումնասիրություններ, կատարել թարգմանություններ:  
Նրա լավագույն վեպերից է «Ռանչպարների կանչը», որը ներկայացնում է 19-րդ  
դարավերջի և 20-րդ դարասկզբի հայոց ազատագրական շարժման «կարմիր  
աստվածների»՝ հայդուկների անձնվեր պայքարը թուրք հրոսակների դեմ հանուն  
մարդկային իրավունքի, պատվի, հայրենի հողի: Վեպի հերոսները սովորական  
ռանչպարներ են՝ արդարադատ, խաղաղասեր, արարող մարդիկ՝ հողագործներ,  
հնձվորներ, սերմնացաններ, ջրբաշխներ, դարբիններ, արհեստավորներ, որոնք ոտքի  
են ելնում պաշտպանելու իրենց մարդկային իրավունքները, արժանապատվությունը,  
հայրենի երկիրը: Իրադարձությունների կենտրոնում զորավար Մախլուտոն է, որը, իբրև  
ականատես ու գործող անձ, պատմում է նշանավոր հայդուկների՝ Արաբոյի, Աղբյուր  
Սերոբի, Սոսեի, Գևորգ Չաուշի, Անդրանիկի և այլ անձնագրի ֆիդայիների՝ Մորուք  
Կարոյի, Մշեցի Տիգրանի, Փեթարա Իսրոյի (նա քրդերից հայ որբեր էր հավաքում՝ «շիթիլ  
անելու» Հայաստանի համար): Հայ ֆիդային ունի միայն մի նպատակ՝ տառապելով  
ծառայել հայոց ազատությանը: Հուզիչ է Անդրանիկի խոսքը իր զինվորներին. «Մեծ  
համբերությամբ կրեցիք ձեր չարչարանքը և հավատքով տոկացիք անթիվ  
զոհողության... Ազատ ապրելու կամ հերոսաբար մեռնելու վճիռը նահանջի մատնեց ձեր  
մեջ ուրիշ ամեն իղձ... Դուք սովորական մարդիկ չեք, այլ հրեղեն մի սերունդ...»:  
Մելքոն վարժապետի այբուբենը՝ Այբ, բեն գիմ, ե՛լ Յովակիմ, Դա եջ, գա, լծիր եզան:  
Է, ըթ, թօ, վեր կաց Թաթօ, ժե, ինի, լին, կապիր քո շուն: Խե, ծե, կեն, ու՛ր է Հակէն: Հօ,  
ձա, դատ, Միհրան Միհրդատ, ճեն մեն, յի կը գանք հիմի: Նու, շա, ու պրծիր, Շաւօ:  
չա, պե, ջէ, ուշ է Վաչէ, ու, սե, վեւ, ծագեց արեւ, տիւն, րէ, ցօ, Մարդ աստծոյ:

Վին, փիր, քէ, քելէ Սրքե, եւ, օ, Ֆէ, օ, ինչ գով է:

«Ռանչպարների կանչի» հեղինակին Իսահակյանը համարել է էպոսային-ասքային տարերքի գրող, և վեպը դրա լավագույն հաստատումն է:

4. Համո Սահյանը հայ նորագույն գրականության ամենասիրված ու հասկացված բանաստեղծներից է, ում պոեզիան բնության թարգմանն է ու աղոթք առ Հայաստան աշխարհ ու մարդ ընդհանրապես: Նա իրեն համարել է Մեծարենցի, Թումանյանի, Տերյանի ստեղծագործական ժառանգորդը: «Իմ բանաստեղծական ճանապարհի սկիզբը ցույց է տվել Թումանյանը, իսկ բանալին տվել է Եսենինը», - մի առիթով ասել է Սահյանը: Նրա ստեղծագործություններում լավագույնս արտահայտվել է բնության ու մարդու անքակտելի կապի ու ներդաշնակության գաղափարը:

«Ինչու՞ հիշեցրի » բանաստեղծությունը ծանր, տխուր մանկության մի թախծոտ հուշ է: Սահյանը վաղ էր կորցրել մորը և նրա մանկության հուշերը միշտ լցված են տխուր հիշողություններով: Ընտանիքում երեխաները շատ էին, իսկ աշխատողը միայն հայրն էր. ապրում էին մի կերպ, իրար օգնելով: Բանաստեղծության հերոսը ցուրտ ձմեռնամուտին կիսամերկ, ցնցոտիների մեջ տավար է արածեցնում: Հայրը գիտի, որ ցուրտ է, որ որդին մրսում է, բայց և այնպես, որպեսզի որդուն քաջալերի, հարցնում է՝ ցու՞րտ է, իսկ որդին ուզում է հորը հագստացնել՝ տաք է:

«Քարին մի՛ նստիր» , - զգուշացնում է հայրը, ապա ավելացնում. «Տավարը լույսով չբերես»: Իսկ քառասուն տարի անց, երբ որդին հիշեցնում է, հայրը արտասվում է, որովհետև այն ժամանակ էլ գիտեր, որ որդին մրսում է, բայց չէր կարող որդուն օգնել. անելանելի, անկարելի կարիքի մեջ էին: Որդին ցավ է ապրում հիշեցնելու համար. Հայրն էլ մեղք չուներ:

Քամին սարերից	.....Ես լուռ նստել եմ
Առաջին ձյունի	Կապույտ մի քարի,
Փռչին է բերում	Կապտել եմ ես էլ
Եվ շաղ էտալիս	Եվ կապույտ քարից
Բոբիկ ոտքերիս	Տարբերվում եմ ես
Ու փշաքաղված	Այնքանով միայն,
Մազերիս վրա:	Որ ես դողում եմ,
	Քարը չի դողում: